Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Իջևանի թիվ 4 հիմնական դպրոց

Թեմա՝ Բուլլիինգ

Վերապատրաստող, մենթոր՝ Լիլիթ Աղբալյան

Ուսուցիչ՝ Մարիետա Սահակյան

Իջևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն .....

1. Բուլիինգի սահմանումը .....

2. Բուլիինգի տեսակները և դրսևորումները .....

3. Բուլիինգի պատճառները .....

4. Բուլիինգի կանխարգելումը .....

5. Բուլիինգի հետևանքները.....

Կատարված հետազոտություններ և հետազոտությունների արդյունքներ

1. Հարցումների արդյունքներ.....

2. Մեր ուսումնասիրությունները .....

3. Եզրակացություն.....

Գրականության ցանկ.....

Ներածություն

Ու հալածված իր հորից,
Փախած չոբան Կարոյից,
Սոված, պատռած շորերով,
Կորչում էր նա օրերով:
/Հ.Թումանյան/

Իննամյա Մարոն ամուսնանում է հասուն Կարոյի հետ: Սկզբում Մարոյին դուր է գալիս Կարոյի բերած քաղցրավենիքը, սակայն առաջին գիշերվանից հետո Մարոն բախվում է հասուն կյանքի և ամուսնական դժվարություններին: Մարոն փախչում է տնից և վերադառնում հայրական տուն, սակայն հայրը չի ընդունում Մարոյին, հաշվի առնելով հասարակության կարծիքը, նահապետական «օրենքները» և վռնդում է նրան: Հուսալքված Մարոն չի դիմանում և նետվում է անդունդը:

Բուլիինգի սահմանումը

Բուլիինգ կամ հալածանք, որևէ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեբանական ուժի գործադրումն այլ անձի նկատմամբ, որը կրում է շարունակական բնույթ: «Բուլիինգ» տերմինն առաջին անգամ գործածվել է 1530 թվականից՝ սկզբնապես նշանակելով «սիրելի», ապա տարբեր ձևափոխություններից հետո, իր ներկայիս իմաստը ստացել է 1710 թվականից:Բուլիինգի ենթարկվող անձը համարվում է բուլիինգի զոհ, իսկ բուլիինգի ենթարկող անձին համարում են բուլեր:Բուլիինգը ամենուր է՝ տանը դպրոցում, ինչքան էլ որ զարմանալի է աշխատավայրում, բակում: : Բուլեր դառնում են այն անձինք ովքեր իսկապես կարիք են զգում ինքնահաստատման, և երբեմն որևէ մեկին վնասելու ցանկությունը լինում է նախանձից: Բուլիինգի զոհ հիմնականում դառնում են հասարակության մեջ իրենց տեղը ոչ ամբողջությամբ գտած անձինք, կամ այն անձինք որոնք ունեն որոշակի արտաքին, ֆիզիկական, արտաքին թերություններ՝ մեծ քիթ, տգեղ արտաքին, կաղ ոտք և այլն: Բուլիինգի զոհ դառնալը շատ առումներով կապված է երեխաների դաստիարակությունից, ընտանեկան մթնոլորտից, որը նույնպես անդրադառնում է երեխայի ինքնագնահատակի ձևավորման վրա:Փորձերը ցույց են տվել, որ բուլերները հիմնականում լինում են այնպիսի ընտանիքներից, որտեղ գործածվում են ֆիզիկական պատիժներ, և նրանց ծնողները իրենց երեխաներին դաստիարակում են, որ յուրաքանչյուր խնդիր կարելի է լուծել ուժի, բռնության միջով: Հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ բուլերների (հիմնականում 6-9 դասարաններում) 60 տոկոսը արդեն քսանչորս տարեկանում գործած է լինում ամենաքիչը մեկ հանցանք: Բուլիինգի զոհ դարձածները հիմնականում լինում են ոչ ապահովված ընտանիքներից, երբեմն նաև ծնողազուրկ, քանի որ նման մարդկանց վիրավորելը շատ ավելի դյուրին է:Բուլիինգի զոհ դարձածները հիմնականում ներփակված են լինում իրենց մեջ, չեն կիսվում ոչ ոքի հետ, և կարծում են, որ դա ամենաճիշտ լուծումն է: Բուլիինգի զոհ դարձածները ձեռք են բերում վախ դպրոցի , շրջապատի հանդեպ, համարում են դպրոցը և միջավայրը տխուր, ոչ ապահով վայր: Բուլիինգի զոհ դարձած մարդիկ ունենում են վատ և տհաճ զգացողություններ, նրանք ունենում են ամոթի, վախի զգացում, դառնում են դյուրագրգիռ,

մտածում են, որ իրենք շատ վատն են, ունենում են շատ ցածր ինքնագնահատական, և գնալով

վերանում է նրանց մեջ ինքնահաստատվածությունը, նրանք չեն ցանկանում հաճախել դպրոց, սկսում են խուսափել հասարակական վայրերից, չեն հաճախում երեկույթների, սկսում են մեկուսանալ հասարակությունից, ներփակվում են իրենց մեջ, որը կարող է հանգեցնել հոգեկան շեղումների, և այս ամենից ազատվելու միակ ուղին, ցավոք, նրանք գտնում են ինքնասպանության մեջ:

Բուլիինգը առավել նկատելի դիսևորուններ է ունենում դպրոցներում :Դպրոցներում հանդիպող բուլիինգը համաշխարհային խնդիր է, որը կարող է ունենալ վատ հետևանքներ դպրոցական միջավայրի համար, և կարող է խախտել այն օրենքը, որով յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ապահով կրթության: Բուլիինգի երևույթը քննարկել են մի շարք հայտնի հոգեբաններ, հետազոտողներ, կրթական հաստատություններ, այս առումով հատկապես ակտիվ մասնակցություն են ունեցել Սկանդինավյան մի շարք երկրներ, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան, բայց դա չի նշանակում, որ այս հարցը չեն բարձրաձայնել այլ, ոչ այդքան զարգացած երկրներ: Այս հարցը արդիական է այնտեղ, որտեղ կա դպրոցական միջավայր, կամ ընդհանրապես միջավայր: Բուլիինգը ըստ ձևերի կարելի է բաժանել երկու խմբի՝ ուղղակի և անուղղակի: Ուղղակի բուլիինգի դեպքում դրսևորվում են հետևյալ վարքային ձևերը. Հարվածել, ծեծել, գողանալ, ծաղրել, անընդհատ բարացնել, վիրավորել, սպառնալ:

Իսկ անուղղակի բուլիինգի դեպքում բուլիինգի զոհին մեկուսացնում են իր միջավայրից՝ ընկերներից, կանխամտածված մեկուսացնելով նրան այդ միջավայրից: հետազոտությունները փաստում են, որ ուղղակի բուլիինգի ձևը հիմնականում բնորոշ է տղաներին, իսկ անուղղակի բուլիինգի ձևը՝ աղջիկներին: Ուղղակի բուլիինգը ավելի հաճախ հանդիպում է կրտսեր դպրոցի, երբեմն էլ միջին դպրոցի երեխաների մոտ, իսկ անուղղակի բուլիինգը արդեն ավելի հասուն տարիքում՝ միջին դպրոցում: Չնայած այս դասակարգմանը, և անուղղակի, և ուղղակի բուլիինգը հանգեցնում է նույն արդյունքին՝ մարդու ֆիզիկական և հոգեբանական ճնշվածության

Բուլիինգը բաժանվում է մի քանի տարատեսակների ՝ կիբեր բուլիինգ, ֆիզիկական բուլիինգ, բառացի բուլիինգ , վերբալ կամ բառացի բուլիինգ, հարաբերական բուլիինգ:

Ֆիզիկական բուլիինգ՝ հարվածելու, ծեծի միջոցով

կիբեր բուլիինգ, որն իրականացվում է համակարգչի միջոցով՝ օգտագործելով համակարգիչը որպես վնասելու միջոց

վերբալ կամ բառացի բուլիինգ՝ պիտակավորման, ծաղրական անունների միջոցով

հարաբերական բուլիինգ, որի միջոցով փորձում են մեկուսացնել մարդուն իր շրջապատից և կանխամտածված բացառում նրան հասարակությունից:

Ֆիզիկական բռնություն

Դա ամենատարածված ահաբեկչությունն է դպրոցում,ինչու չէ շրջապատում, բանակում : Կռվարարը դպրոցում և միջավայրում մեկ այլ երեխայի կամ անձի վատ վերաբերմունքի համար օգտագործում է հարվածում կամ հալածում: Բուլիինգի այս տեսակի հետ կապված խնդիրն այն է, որ շատերը վախենալով վրեժխնդրությունից, իրենց ծնողներին ոչինչ չեն ասում: Դա շատ հեշտ է հայտնաբերել `շնորհիվ բազմաթիվ նշանների, որոնք զոհը կարող է ունենալ ամբողջ մարմնում: Կարևոր է, որ ծնողները իմանան, թե ինչպես պետք է տեղյակ լինեն այս տեսակի հետապնդումների մասին, քանի որ շատ դեպքերում զոհը այլևս չի կարող կարգավորել իրավիճակը, և նրանք որոշում են վերջ տալ իրենց կյանքին:

Կիբերբուլիինգ

Կիբերհետապնդումը վերջին տարիներին ուժեղանում է սոցիալական ցանցերի վերելքի պատճառով: Հետապնդումը տեղի է ունենում էլփոստով կամ տեքստային հաղորդագրությամբ: Բռնարարը առցանց սուտ լուրեր է տարածում ` տուժողի մոտ լուրջ հուզական ու մտավոր խնդիրներ առաջացնելով: Ի տխրություն և ապատիան, զուգորդված քնի հետ կապված խնդիրներից, ամենատարածված ախտանիշներից են այն երեխաների շրջանում, ովքեր տառապում են այդպիսի բռնությամբ:

Բանավոր /վերբալ/ ահաբեկում

Այս տեսակի ոտնձգությունների ժամանակ բռնարարը օգտագործում է վիրավորանքներ և սպառնալիքներ զոհին վախեցնելու և նրան հոգեկան ու հուզական վնաս հասցնելու համար:

Երեխաները, ովքեր դպրոցում այսպիսի բուլիինգի են ենթարկվում, բնութագրվում են զայրանալով, անտարբերությամբ և ուտել չցանկանալով: Դա դպրոցում բուլիինգի բավականին տարածված տեսակ է և ուղղված է հատկապես այն երեխաների, ովքեր չեն համապատասխանում հասարակության կանոններին, ինչպիսիք են ավելորդ քաշը, ֆիզիկական խնդիր ունենալը կամ պարզապես տարբեր լինելը:

Սոցիալական բռնություն

Դա ահաբեկման մի տեսակ է, որը դժվար է հայտնաբերել: Դասընկերները նրան դատարկում են ու զոհը չի կարող հարաբերվել սոցիալական տեսանկյունից: Սոցիալական ահաբեկման դեպքերում զոհը ձգտում է միայնության, և տրամադրության փոփոխությունները բավականին հաճախակի են լինում: Դա բռնության մի տեսակ է, որը մեծ մասամբ տառապում են աղջիկները, և հոգեբանական հետևանքները բավականին կարևոր

Մարմնական ահաբեկչություն

Հալածանքի հինգերորդ տեսակը մարմնական է: Դա կարող է ծնողներից ամենաանհայտը լինել, չնայած վնասն իսկապես մեծ է: Դրանում բռնարարը սեքսիստական կամ անպարկեշտ մեկնաբանություններ է անում մի աղջկա կամ նույնիսկ հետապնդում է նրան սեռական եղանակով: Ոտնձգությունների այս տեսակը հակված է մեծապես վնասել զոհին հոգեբանական տեսանկյունից: Այս տարիների ընթացքում այս տեսակի հետապնդումների ենթարկված աղջիկը կարող է լուրջ խնդիրներ ունենալ, երբ բանը հասնում է այլ մարդկանց հետ էֆեկտիվ հարաբերությունների:

Մի խոսքով, ահաբեկելը շատ լուրջ երեւույթ է, որը պետք է հնարավորինս շուտ արմատախիլ անել դպրոցներից: Ծնողների և մանկավարժների խնդիրն է ուշադիր լինել այս տեսակի վարքի նկատմամբ և կանխել դրա հետագա առաջխաղացումը: Միանգամայն անընդունելի է, որ այսօր կան երեխաներ, ովքեր տառապում են այս տեսակի վնասներից, ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեկան: Այս տեսակի ոտնձգությունները սովորաբար նշում են մարդուն ցմահ և ստիպում են նրանց հոգեբանորեն տառապել: Ժամանակին դադարեցնել այսպիսի վարքը կարող է առանցքային լինել, որպեսզի երեխան կամ երիտասարդը չխորտակվի և ցանկանում են ինքնասպան լինել՝ անվերջ տառապանքներից խուսափելու համար:

Բուլիինգի դրսևորման տեսակներից մեկն էլ թրաֆիքինգն է:

Թրաֆիքինգը, մարդկանց՝ ստրկական, սեռական, բռնի և չնչին վարձատրությամբ աշխատանքի տեսքով անօրինական շահագործումն է: Այն նույնչափ շահութաբեր է, ինչպես թմրամիջոցների և զենքի ապօրինի վաճառքը:

Թրաֆիքինգն ընդգրկում է զենքի,թմրանյութերի,ռադիոակտիվ նյութերի,գողացված ավտոմեքենքների,մարդկանց,մարդկային օրգանների անօրինական վաճառքի,նենգության երևույթները:

Խոսելով «մարդկանց առևտրի» մասին՝ավելի շուտ նկատի են ունեցել «կանանց և երեխների առևտուրը» կամ սեքսուալ շահագործման նպատակով առևտուրը,սակայն իրականում այդ երևույթը շատ ավելի լայն ու բազմաբնույթ է:Եվ իրոք,սեքսուալ շահագործման մեջ ներգրավված կանաց և աղջիկների բաժինը գերակշիռ է,սակայն այս

երևույթի ներքո հասկացվում է նաև գաղթականներին անօրինական երկիր բերելը՝տանը,արհեստանոցում,գյուղատնտեսության,շինարարության մեջ,ստվերային բիզնեսում ցածրակարգ,ցածր վարձատրվող,ընդհատակյա աշխատանքների,«գրանցմամբ» հարկադրական ամուսնության,անօրինական որդեգրման,ստրիպ բարերում և հասարակաց տներում աշխատելու նպատակով երիտասարդ կանանց ու աղջիկներին վաճառելու,զանազան կարգի հարկադրական աշխատանքներում մանկական աշխատուժն օգտագործելու համար:

Բուլիինգի պատճառները

Բուլիինգի հիմքը դնում են ծնողները, որքան էլ դա տարօրինակ հնչի: Բնական է, երբ ծնողն իր երեխային մեծարում է, նրան ասում, որ ամենալավն է, ունի շատ ավելի արժանիքներ, քան այլ երեխաները: Եվ այս թվացյալ սիրո դրսևորումը սերմանում է երեխայի մեջ մեծամտություն և փակում նրա աչքերը, որ չտեսնի իրականությունը և չցանկանա հավատալ, որ որևէ մեկն ինչ-որ բանում նրանից առաջ է անցել: Ցավոք, սա բարդ ուղղելի գործընթաց է, սակայն ավելի սարսափելի են այս «մոլախոտի» պատճառով կատարվող գործողությունները, հատկապես բուլիինգը:Փոքր տարիքում ծնողական մեծարանքի արժանացած երեխան ծաղրում է աշխատասեր աշակերտներին, ովքեր ստանում են բարձր գնահատական:Պատանեկան տարիքում այդ նույն երեխան կնախանձի այլոց, ովքեր շատ ավելի հայտնի են աղջիկների շրջանում կամ ավելի խելացի են: Այս երկու դեպքում էլ նա ծաղրում է նրանց, փորձում զգալ իրեն ավելի բարձր:

Դպրոցներում հանդիպող բուլիինգը համաշխարհային խնդիր է, որը կարող է ունենալ վատ հետևանքներ դպրոցական միջավայրի համար, և կարող է խախտել այն օրենքը, որով յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ապահով կրթության:

Ընդունված է ասել, որ շատ դեպքերում կռվարարները ֆիզիկապես ավելի ուժեղ են, քան իրենց զոհերը: Հետևաբար, ֆիզիկական բնութագրերի այս տարբերությունը թույլ է տալիս հանցագործներին ահաբեկել իրենց զոհերին՝ որպես իրենց հեղինակությունը ցույց տալու միջոց: Հետևաբար, ֆիզիկապես թույլ աշակերտները հիմնականում հանդիսանում են ահաբեկման այս ձևի թիրախը: Մյուս կողմից, ահաբեկումը կարող է առաջանալ հոգեբանական գործոնների պատճառով: Այս դեպքում, ցածր ինտելեկտի գործակից ունեցող աշակերտները կարող են ահաբեկել իրենց գործընկերներին, ովքեր դասի ընթացքում փայլուն են: Այս

սցենարի կռվարարները ձգտում են նույնիսկ ֆիզիկական միջոցներով ծածկել այն, ինչին չեն կարող հասնել ինտելեկտուալ առումով: : Բուլինգի տարածմանը մեծապես նպաստում է նաև այ հանգամանքը, որ այս գործընթացում ներգրավում են ոչ միայն զոհն ու բռնարարը, այլև՝ լուռ հետևողների մի ստվար զանգված:

Բուլիինգի կանխարգելումը

Հավանական է, որ երեխան ենթարկվել է բուլիինգի, եթե նրա վրա կան կասկածելի վնասվածքներ, եթե նրա իրերը մշտապես վնասված վիճակում են կամ կորել են, եթե նա սկսել է կորցնել հետաքրքրությունն այն բաների հանդեպ, որոնք նախկինում սիրում էր, և, իհարկե, եթե նա պարբերաբար խուսափում է դպրոց հաճախելուց կամ տնից դուրս գալուց՝ կեղծելով, իբր հիվանդ է:

Կարևոր է վաղ տարիքից երեխայի հետ զրուցել բուլիինգի մասին և կառուցողական կերպով նրան տեղեկացնել բուլիինգը մերժող և հակախտրական մոտեցումների մասին, որպեսզի հնարավոր լինի կանխել բուլիինգը, քանի դեռ ուշ չէ: Որպես ծնող՝ կարելի է երեխային պարզ ներկայացնել, թե ովքեր և ինչու են սովորաբար բուլիինգի ենթարկում այլ անձանց, կարելի է նաև միասին հոլովակներ նայել, իսկ այնուհետև քննարկել դրանք: Բացի այդ, կարելի է երեխայի հետ օրը 15 րոպե զրուցել նրա դպրոցական կյանքի ու գրաֆիկի մասին, հարցնել՝

նրա օրն ինչպե՞ս է անցել դպրոցում, այդյո՞ք որևէ լավ կամ վատ բան է պատահել դպրոցում,. նման հարցերի շուրջ զրուցելը կարող է ծնողներին օգնել բացահայտել իրենց երեխայի առօրյայի փոփոխությունները, եթե դրանք կան, փոփոխություններ, որոնք կարող են երեխայի դպրոցական կյանքում անհանգստության պատճառ լինել: Կարևոր է հիշել այն մասին, որ հարկ է խուսափել բուլիինգի ենթարկող անձի ծնողների հետ պահի ազդեցության տակ կապ հաստատելուց, քանի որ դա միայն կբարդացնի իրավիճակը: Փոխարենն անհրաժեշտ է կապվել դպրոցի տնօրինության,հոգեբանի և դասղեկի հետ, որպեսզի նրանք միջնորդեն իրավիճակին:

Բուլիինգի կանխարգելման գործում մեր տրամադրության տակ եղած ամենակարևոր գործիքներից մեկը հոգեբանական աջակցությունն է, որն ապահով միջավայր է ստեղծում երեխայի ինքնարտահայտման համար:Օրինակ՝ հոգեբանների օգնությամբ բուլիինգի ենթարկող անձինք կարող են սկսել հասկանալ, թե որտեղից է առաջանում իրենց զայրույթը և թե ինչու են իրենք այդպիսի վարք դրսևորում, և, իհարկե, հոգեբանական աջակցության արդյունքում նրանք կարող են աշխատել իրենց վարքը բարելավելու ուղղությամբ: Ավելին, հոգեբանական աջակցության շնորհիվ կարելի է սովորել կառավարել հույզերը, կողմնորոշվել՝ ինչպես ինքնադրսևորվել կոնֆլիկտային իրավիճակներում, զարգացնել ապրումակցելու կարողությունը, բարձրացնել ինքնագնահատականը, նվազեցնել վախերն ու անհանգստությունները, ինչպես նաև դիմակայել ինքնավնասման մտքերին և կանխել դրանց առաջացումը:

Շատ կարևոր է իմանալ, որ բուլիինգը արգելվում է օրենքով: Մի շարք երկրներ, ինչպիսիք են Կոլումբիան, Միչիգանը, Մոնտանան, Հյուսիսային Դակոտան, Հարավային Դակոտան, բուլիինգը դատապարտում են օրենքով: ԱՄՆ-ի 45 նահանգները նույնպես ընդունել են հակաբուլիինգային օրենքներ:

Բուլիինգի հետևանքները

Բուլիինգի հոգեբանական հետևանքները ներառում են դեպրեսիա, անհանգստություն, ցածր ինքնագնահատական, ինքնավնասող վարք, ալկոհոլի և թմրանյութերի օգտագործում և կախվածություն, ագրեսիա և բռնության կամ հանցագործության մեջ ներգրավվածություն: Թեև ահաբեկումը կարող է հանգեցնել ցանկացած երեխայի հոգեկան առողջության խնդիրների, նրանք, ովքեր արդեն ունեն հոգեկան առողջության հետ կապված դժվարություններ, ավելի հավանական է, որ ենթարկվեն բռնության և զգան դրա բացասական

հետևանքները: Բուլինգի ենթարկվող երեխայի մոտ կարող են զարգանալ քնի խանգարումներ, ստամոքսի ցավը, գլխացավը, սրտի բաբախյունը, գլխապտույտը, անկողնում թրջելը:

*Երեխան դպրոցից վերադառնում է անտրամադիր, գնալով պակասում են ընկերները:

*Երեխան հաճախ տուն է գալիս կեղտոտված հագուստով, պայուսակով, քերծվածքներով:

*Երեխայի մոտից հաճախ իրեր են կորում, հնարավոր է դրանք իրենից խլում են:

*Երեխան չի ցանկանում սովորել կոնկրետ առարկա, կամ գնալ այդ դասին, հնարավոր է երեխան բուլիինգի է ենթարկվում ուսուցչի կողմից:

Կատարված հետազոտություններ և հետազոտությունների արդյունքներ

Հարցումների արդյունքներ

Իջևանի թիվ 4 հիմնական դպրոցի 8-րդ ա դասարանը կատարել է նախագծային աշխատանք, որին նախորդել էր հարցում/Արդյոք ենթարկվել/ենթարկել/ է բուլիինգի,շրջապատում տեսել է բուլիինգ, և ինչպես է այն դրսևորվել/սեռը և տարիքը/:

Ստացվել է հետևյալ պատկերը, որն արտացոլված է դիագրամի տեսքով,ըստ վիճակագրության բուլիինգի ենթարկվածների պատճառների %-ը (տարիքային)



11տ.-3%

12տ.-19%

13տ.-35%

14տ.-19%

10տ.-8%

15տ.-16%

Իջևանի թիվ 4 հիմնական դպրոցի 34 աշակերտ մասնակցել է հարցմանը,նշելով պատճառները:



Թուլություն-26%

Անպատճառ-15%

Տեսքի-12%

Կազմվածքի-9%

Հագուստի-9%

և այլն

Աշխարհում 13-ից 15 տարեկան աշակերտների կեսը՝ շուրջ 150 միլիոն երեխա, ասել է, որ դպրոցում կամ դպրոցի տարածքում հասակակիցների կողմից բռնության է ենթարկվել: Սա փաստում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի վերջին զեկույցներից մեկը:

Բուլինգը վատ է անդրադառնում աշակերտների կրթության և բարեկեցության վրա թե' աղքատ և թե' հարուստ երկրներում հավասարաչափ:

Այս ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այս վիճակագրությունը արտացոլված է նաև մեր դպրոցում Աշխարհի տարբեր երկրներում կազմակերպվում է «Վերջ բռնությանը» թեմայով քննարկումներ երիտասարդների ու դեռահասների հետ:Այս միջոցառումների շարքը հարթակ է, որտեղ նրանք կարող են պատմել բռնության ենթարկվելու իրենց պատմությունները, խոսել՝ ինչ է պետք իրենց դպրոցում անվտանգ զգալու համար և խնդրի լուծման իրենց առաջարկները ներկայացնել երկրների առաջնորդներին: Դպրոցներում բռնությանը վերջ դնելու համար հարկավոր է լինել շատ իրազեկված,դպրոցում կազմակերպել բաց դասեր,մինչ դասարանային քննարկումներ,իրազեկիչ հանդպումներ, տարածել համապատասխան նյութեր և բուկլետներ:

Աշակերտները սեփական ուժերով ստեղծեցին իրազեկման թերթիկներ և գրքույկներ, որոնք կծառայեն վերոհիշյալ նպատակին:

Լինել իրազեկված՝ նշանակում է լինել պաշտպանված



Եզրակացություն

Այսպիսով բուլիինգը՝ ինչպես աշխարհում այնպես էլ հայաստանյան իրականությունում հատուկ լուծումների կարիք ունի:Կատարված հետազոտությունը թույլ տվեց բացահայտել, որ Հայաստանում գոյություն ունի բուլիինգի բավականին լուրջ խնդիր, սակայն դրա մասին ընդունված չէ խոսել, այնպես, ինչպես ընտանեկան կամ սեռական բռնության կամ այլ խնդիրների մասին: Հասարակությունը կարծես քողարկում է բուլինգի դեպքերը: Բուլինգի խնդիրն ըստ էության բարձրաձայնվելու փոխարեն թաքցվում է և ներկայացվում որպես հայ հասարակությանը ոչ բնորոշ մի երևույթ: Այսպիսով, դպրոցական բուլինգի հիմնական պատճառը ծաղրողի հոգեկան խնդիրներն են: Ծաղրողը հաճախ կամքով թույլ մարդ է և իրեն բարձր է զգում միայն այն ժամանակ, երբ ծաղրում է մնացածին, երբ իր աշխարհում նա դառնում է բարձրագույնը:

Բուլիինգի խնդրի լուծումն ու կանխարգելումը պետք է գտնել երեխա-ծնող- ուսուցիչ ակտիվ համագործակցության շնորհիվ: Դպրոցում դասղեկի ժամերին պարբերաբար անդրադառնալ խնդրին, քննարկել երևույթը, խոսել դրա վատ ազդեցությունների մասին: Մեր հասարակությունը ձգտում է խնդիրները ստվերում պահել այն պատճառաբանությամբ, որ եթե խնդիրը փակի տակ է, դադարում է տարածվել և գոյություն ունենալ:Սակայն պետք է հաշվի առնել մի կարևոր փաստ, որ երեխայի կյանքում եղած ցանկացած երևույթ, լինի դրական թե բացասական, մեծ ազդեցություն է թողնում նրա հետագա կյանքի որակի վրա: Եթե կան խնդիրներ, կգտնվեն դրանց լուծումները, պարզապես պետք է տեսնել, հասկանալ խնդիրը և

լուծումներ գտնել:

Կարելի է աշակերտներին ներկայացնել իրենց իրավունքները, միասին կարդալ այն օրենքները, որոնցով պաշտպանվում են այդ իրավունքները:Կարելի է մշտապես կապ պահել դպրոցի հոգեբանի հետ, հանդիպել և քննարկել երեխայի պահվածքը:Շատ կարևոր է, որ ծնողներն ուշադրություն դարձնեն իրենց երեխաների ամենօրյա վարքին, այնպիսի մանրուքների, ինչպիսիք են, օրինակ՝ դպրոց գնալու ցանկության բացակայությունը, նույն մարդուց շարունակական բողոքը, անտրամադիր կամ ընկճված լինելը: Եթե նման նախանշաններ կան, մեծահասակները նախ պետք է երեխայի ներքին տագնապայնությունը նվազեցնեն և շարունակական աշխատանքներ տանեն:

Բուլինգ - մաս 1 | Bullying - Part One

Գրականություն

ՀՀ օրենքը երեխայի իրավունքների մասին

ՀՀ օրենքը կրթության մասին

Հ.Թումանյան ՝՝Մարո՝՝

Մ.Միքայելյան “ Բռնության և զոհի հոգեբանություն”

Իջևանի թիվ 4 հիմնական դպրոցի 8-րդ ա դասարանի նախագծային աշխատանքի հետազոտությունների վերլուծություն

Ազատ Հանրագիտարան